ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության հր.-1, 2201, հեռ. (0222) 2-03-65, (060) 447-000, էլ. հասցե abovyan.kotayq@mta.gov.am

03-ը մարտի 2024թ.

Շնորհավորական ուղերձ Մարտի 8-ի՝
Կանանց միջազգային օրվա կապակցությամբ

Սիրելի՛ կանայք, թանկագի՛ն մայրեր, քույրեր և դուստրեր.

Ջերմորեն շնորհավորում եմ բոլորիդ Մարտի 8-ի՝ Կանանց միջազգային օրվա կապակցությամբ:

Գարնանամուտի այս սպասված տոնը լավագույն առիթն է արժևորելու ձեր առաքելությունը ինչպես ընտանիքներում, այնպես էլ աշխատանքային գործունեության մեջ: Ամուր ու ներդաշնակ ընտանիքների հիմքում անփոխարինելի դեր ունեն օրինակելի ու հոգատար հայ կանայք, որոնք չնայած հոգսաշատ առօրյային, ամենատարբեր բնագավառներում նաև պարտաճանաչ ու բանիմաց մասնագետներ են:

Սիրելի՛ կանայք.

Գնահատելի է ձեր հոգատարությունն ու նվիրվածությունը, գիտելիքներն ու մեծ ներուժը, որոնք անմնացորդ ծառայեցնում եք հասարակության առաջընթացին, սերունդների դաստիարակության, կրթության ու երկրի զարգացման պատասխանատու գործին:

Մարտի ութի առթիվ առանձնահատուկ շնորհավորում եմ Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի, համայնքային ենթակայության կազմակերպությունների կին աշխատակիցներին.

Նկատելի և գովելի է համայնքի բարօրությանն ուղղված ձեր արդյունավետ ու պարտաճանաչ աշխատանքը:

Գարնանային այս պայծառ տոնի կապակցությամբ, կրկին շնորհավորելով, մաղթում եմ խաղաղություն և բարեկեցություն, հարատև երջանկություն ու ներդաշնակություն ձեզ և ձեր ընտանիքներին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԲԱԲԱՅԱՆ